ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

2006թ. հայ-վրացական սահմանները գծելու ժամանակ Դեղձավան բնակավայրի վարչական հողերից զգալի չափով հողատարածք, մոտ 50հա-ի չափով, մնացել է փշալարից այն կողմ, որից 6.2հա-ն թվով 19 քաղաքացիների սեփականությունն է, 3.4հա-ն համայնքային սեփականության վարելահող է, իսկ մոտ 40.4հա-ն՝ համայնքային սեփականության արոտավայրեր են: Ցանկապատված հատվածի աջ և ձախ կողմերում առաջացել է սահմանային շերտ, 15մետր լայնությամբ, որը որոշ հատվածներում կիսել է հողատեր սեփականատերերի տարածքներըև փաստացի դարձրել անհնարին հողային աշխատանքները կազմակերպելու համար: Այդ հողերի հետ կապված մինչև օրս փոխհատուցում չի տրվել, ո՛չ հողի սեփականատեր քաղաքացիներին, ո՛չ էլ համայնքին: Անգամ այդ հողատարածքները համայնքի հաշվեկշռից դուրս չեն գրվել:

Մեր խնդիրն է հաշվի առնել քաղաքացիների շահերը՝ սեփականաշնհորված հողերի վերաբերյալ, և համայնքի շահերը՝ համայնքի սեփականություն համարվող հողերի վերաբերյալ:

Ուստի խնդրում ենք Ձեզ, ներկայացնել ավագանու նիստին, հողի հարկի արտոնություն տրամադրելու համար:

Հարգանքներով

Դեղձավանի վարչական ղեկավար՝ Յու. Հովհաննեսյան

10.02.2025թ.